

կարելի է տեսլ, որ Փոքր-Ասիայում և հիւսիս-
յին Ասորիքում ապրել է քաղաքակրթութեան մի
ժողովուրդ, որ առաջին անգամ գտել և գոր-
ծադրել է ասորա-փոքրասիական պատկերագը-
րը, Հրնդ-կուրպական ազգերի լեզուների մեջ ամենամիկն
հիշատակեր հայերեն են մնացած: Արձանագրու-
թիւնների հիման վերայ՝ կարելի է նախնի Հայոց
պատմութեան ամենաքիչը 500 տարուայ շրջան
բացատրել, եթէ չստեղծ հազար՝ մի պատմու-
թիւն, որ Հայոց ուրիշ ազգերի վերայ ունեցած
փառաւոր իշխանութեան նկարագրութիւնն է
տալիս, Հեղինակը գրքի վերջում այն յայտն է
յայտնում, թէ կարճ ժամանակից յետոյ՝ նախնի
Հայոց պատմութիւնը նոյնպէս կուտաբանուի
ինչպէս Ասորեստանեայց, Բաբելոնի և Եգիպ-
տոսի պատմութիւնները:

Գ. Վ. Յովսէփիան.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Քիմիկոս Ժոզեփ արտիստական օդը. — Փրանսիա-
կան թերթերն իրեն հաւատալի լուր հաղորդում
են, որ Քիմիկոս Ժոբերը փակ քնակարանների օդի
թաքմութիւնը վերականգնելու նոր միջոց է գտել
և եթէ հարկը պահանջելու լինի, կարող է միշտ
էլ, ոչ թէ ըստ սովորականին դուռ ու լու-
սամուտ բանալով, այլ իւր հնարած քիմիական
առանձին նիւթի օգնութեամբ վերադարձնել
օդին թթուածնի անհրաժեշտ քանակութիւնը և
հեռացնել նրա միջից ածխածինն ու զանազան
գոլորշիները:

Դեղաբոլորը այս նոր գիւտի առթիւ ներ-
կայացրել է Պարիզի բժշկական ճեմարանի վար-
չութեան ժողովին հետեւեալ զեկուցումը. «Յայտնի
է որ մեր ներշնչած օդը բաղկացած է 790₀ բո-
րականից և 210₀ թթուածնից: Մարդ շնչառու-
թեամբ կաննելով օդի թթուածնը և փոխարէնը
ածխածին և ուրիշ գոլորշիներ արտաշնչելով,
այն առաժնան փչացնում ու ծանրացնում է
ոնեանիցն օդը, որ այլևս անտանելի է դառ-
նում այնանց ապրելը, Քիմիկոս Ժոբերը, երբ
ուսումնասիրում էր այդ կարեւոր խնդիրը, առան-
ձին ուշադրութիւն դարձրեց հետեւեալ հանգա-
մանքների վրայ. թէ արդեօք ապականուած օդի
բորականի յարարեքական քանակութիւնը նոյնն
է մնում և թէ հնարաւորութիւն կայ որեւիցէ
միջոցով հեռացնել ածխածինն ու մարմնի ար-
տադրուած գոլորշիները, Երկար ժամանակի փոր-
ձերից յետոյ Ժոբերը վերջապէս այն եզրակա-

ցութեան հասաւ, որ օդի 790₀ բորականից
լիովին մնում է և թէ նրա թաքմութեան համար
անհրաժեշտ է միմիայն վերականգնել պակասող
թթուածնը: Եւ նա գտաւ այն հնարը, որի
շնորհիւ կատարելապէս լուծուած է խնդիրը,
այսինքն ապականուած օդը Ժոբերի քիմիական
նիւթով ամենամեծ ճշգրտութեամբ յետ է ստանում
փառնուած թթուածնը: Այդ նիւթը շփուելով
միայն օդի հետ՝ վերանորոգում է այն ու դար-
ձնում նրան իր կորցրած քանկան յատկութիւննե-
րը: Ժոբերն առ այժմ չի ուզում իր գիւտի դադա-
նիքը յայտնել, աչքի առաջ ունենալով թէ ինչ
դէր կարող է խաղալ այն Փրանսիայի պաշտպա-
նութեան դորձում, որովհետեւ այս նոր եղանա-
կով կարելի է ամենայն ճշտութեամբ ջրի տա-
կից լողացող նաւերի փակ օդը նորոգել: Անցեալ
տարի ծովային վարչութեան մէջ, հրամանատար
Բենարի կարգադրութեամբ, փորձեր կատարուե-
ցան, որոնց հետեւանքն հրաշալի էր: Այդ քիմիա-
կան նիւթից 4 հազարադրամ (95₂ դր) բաւա-
կան է, որ մի չափահաս մարդ կարողանայ 24
ժամ ապրել այնպիսի փակ խոցի մէջ, որն ոչ
մի անցք չունենայ օդի փոփոխութեան համար:
Այսպիսով ուրեմն հնարաւորութիւն է ստաց-
ւում օդ մատակարարելու ջրասուղիներին հանք-
փորոցներին և կամ առհասարակ այն մարդկանց,
որոնք այնպիսի միջավայրերում են աշխատում,
ուր օդափոխութեան միջոցներ չկան:

Տպագրութիւն առանց տպագրական մրի. — Անգղիա-
կան լրագրները շատ են գրում մի ուրիշ նոր
գիւտի մասին, որն անշուշտ մեծ զարկ կտայ ապա-
գրութեան: Պարոն Գրէնը, այդ նոր գիւտի հե-
ղինակը, շատ ժամանակ չէ, ինչ փորձեր արու և
ցոյց տուեց, որ կարելի է, առանց ապագրական
մրի, ելեքտրականութեան միջոցաւ գրքեր տպա-
գրել: Այդ փորձերը կատարուեցան Անգղիայի
Կրոյզն քաղաքում բաղմաթիւ հանգիստատեաննե-
րի ներկայութեամբ: Պարոն Գրէնն ինքն անձամբ
ցոյց էր տալիս իր հնարած գործիքները. իսկ նրա
կատարած փորձերն իրօք հիացրին ներկայ դա-
նուողներին: Տպագրութեան համար գործադը-
րուող թուղթը նախօրօք ենթարկուած է քիմիա-
կան նիւթերի աղգեցութեան, իսկ երբ մասնուի
տակն է գրւում և հպւում է շարուած գրերին,
իսկոյն ելեքտրական հոսանքին է հանդիպում:
Վերջինս վերլուծում է քիմիական նիւթերը և
իւրեւ դրա հետեւանք ստացւում է շատ պայ-
ծառ, ու գոյնի անջնջելի տիպ: Թէև ապա-
գրութեան այս նոր եղանակը դեռ ևս կատարե-
լութեան կարօտ է, սակայն այժմ արդէն
գործադրում է և շարունակ նորանով փորձեր
են կատարում:

Մարդու մարմնի պարունակած սկզբնական նիւթերը:

— Մի գերմանացի գիտնականը որ վաղուց ի վեր ուսումնասիրում է առողջ մարդկանց մարմնի ընդունակության կազմութիւնը, որոշել է որ նորա տարրական մասերը համապատասխան են իրենց քանակական չափով 1200 ձուկ նախահողմից ու գեղնուցին: Եթէ կարելի լինէր նրան գաղափար գրութիւն տալ, այն ժամանակ կտանային 98 խորանարդ մետր զանազան դաղեր և այնքան ջրածին, որով հնարաւոր կլինէր լցնել 70 հազար լողարկ (մօտ 4 մ. 11 դր.) ծանրութիւն բարձրացնող մի օդապարիկ: Մարդու մարմնը, երբ կանոնաւոր վիճակի մէջ է գտնուում, պարունակում է իւր մէջ այնքան երկաթ, որից կաշւի կլինի 7 մեծ մեկ շինել, այնքան ճարպ, որից կարելի կլինի 6½ հազարապարկ (15 դր.) մօմ թափել, այնքան ածխածին, որից կարելի կլինի 65 հատ հասա մատիւ պատրաստել և այնքան լուսակիր, որի մէջ 820,000 լուսիւ գլուխ կաշւի կլինի թաթախել: Սոցա վերայ պէտք է աւելացնել 20 թէյի դդալ գործածական աղ, 50 սովորական կտոր շաքար և 42 լիտր (3½ վեդրոյ) ջուր:

Միևիտ 100 տարի ապրելու հնարք. — Արուեստն անվերջ, կեանքը կարճ՝ ասում է լատինական առածը, և ահա գիտնականները շատերն աշխատում են դանել այն արուեստը, որով կարելի լինի մարդուս կեանքը հնար եղածին չափ երկարացնել: Այսպէս անգղիացի բժիշկ Ջեմս-Մայքերն առաջարկում է հետևեալ բոլորովին պարզ խորհուրդները, որոնք, նրա համոզմունքով կարող են միջոց տալ մինչև հարիւր տարի ապրելու: — Ա. 8 ժամ քնել, Բ. աջ կողքի վրայ պառկել, Գ. գիշերները ննջարանի դռներն ու լուսամուտները բաց թողնել, Դ. ոտները սրբելու համար ննջարանի դռների առաջ գորգեր փռել, Ե. առաւօտները շատ սառը ջրով չլողանալ (առ նուազը ջրի տաքութեան աստիճանը համապատասխան պիտի լինի սենեակի օդի բարեխառնութեան), Զ. մահճակալը պատին կից չդնել, Է. նախաճաշից առաջ թէթե մարմնամաքութիւն անել, Ը. որքան կարելի է քիչ միս գործ ածել և հոգ տանել, որ լաւ եփուած լինի, Թ. կաթ չխմել, Ժ. կերակուրներ պատրաստել ապրիւս շատ ճարպ բանեցնել, որովհետև ճարպը դանազան հիւանդութիւններից ազատ է պահում մարմնը, ԺԱ. զգուշանալ թունաւոր նիւթերից, որոնք կարող են մարմնի կազմածքը քայքայել, ԺԲ. մաքուր օդում օրական մի քանի անգամ մարմնամաքութիւն անել, ԺԳ. սենեակում ոչ մի կենդանի չպահել, ԺԴ. եթէ հնարաւոր է գիւղում բնակուել, ԺԵ. միայն ջուր խմել և պաշտպանուել խոնարս թիւնից, ԺԶ. փոխիւնել զբաղմունքները, ԺԷ. ժամանակ առ ժամանակ

հանդիստ առնել, ԺԸ. սահմանափակել փառասիրութիւնը և ժԹ. բնաւորութեան հաստատութիւնը պահպանել:

Ռօս արքան. — Մօս օրերս Լոնդոն է գնացել մի թագաւոր, որի շքախումբը կազմում է ընդամէնը մի սենեկապետ, Գա նորին արքայական մեծութիւն Գէորգ Յիւնիէօ Ռօսն է, Անգղիայի հովանաւորութեան տակ գտնուող Կոկոսի կղզիների դահաւալը և նառալ փոքրիկ կղզու նահանգապետը: Այդ կղզիները ճաւայից 938 վերստ հարաւ են ընկնում:

Ռօս արքան ազգով շառլանգացի է և մի ժամանակ Գլազգովի համալսարանում ուսանող էր:

Շեքսպիրի ծովագնաց Ռօսը, այս համեստ թագաւորի պապը, գտաւ Կոկոսի 18 կղզիները և իբրեւ լիազօր աէլր սկսեց կառավարել: Անգղիան այն ժամանակ առանձին նշանակութիւն չուէր այդ կղզիներին և Շեքսպիր Ռօսի ու նրա որդու իրաւասութեան թողեց: Բայց 1840 թուին յանկարծ կարգադրուեցաւ, որ այդ կղզիներից մէկը նառալ կոչուի, Անգղիայի զբոսակը ծածանի այգտեղ և թէ կղզիների կառավարութիւնը Անգղիայի կողմից Ռօսին ու նրա ժառանգին յանձնուի, ներկայ միապետը 58 տարեկան է և գահ է բարձրացել 1864 թուին, հօր մահուանից յետոյ: Այժմ Չամբերլէնը նրան Լոնդոն է հրաւիրել և մտադիր է հարկաւոր միջոցներ ձեռք առնել, որպէս զի ապահով վիճակի մէջ զնէ նրա թագաւորութիւնը: Մամուլի ներկայացուցչներին Ռօսը պատմել է, որ իւր հպատակները խիտ աչքի են ընկնում իրանց խաղաղ բնաւորութեամբ և իբրեւ ապացոյց յիշել է, որ վերջին 16 տարուայ ընթացքում ոչ մի չարագործութիւն չի կատարուել այնտեղ: Կոկոսի կղզիների բնակիչները երկրազորութեամբ են պարապում, բարեբախտ վիճակի մէջ են և կարիք չեն զգում զբոսից որ և է բան ընդունելու:

Չարխանի բարեխառն. — Լոնդոնի Պատկնդատն կոչուած երկաթուղու կայարանում ճանապարհորդները յաճախ պատահում են վերդալեան ցեղին պատկանող մի շան, որը շարունակ հետևում է այս ու այն լաւ հագնուած ուղևորին և սկսում է այնքան փաղաքել ու քծնել նրան, մինչև ստանում է իր խնդրած մի քանի կոպէկն ու տանում մօտակայ գանձանակն է ձգում: Տիմր, այսպէս են անուանում այդ նորեկ մտրացիանին, երկաթուղու կայարանի կառավարչին է պատկանում: Տիմի այդ միջոցով ժողոված փողը բաժանում են երկաթուղու թշուառացած ծառայողների որբերին ու այրեններին:

Մի ուրիշ կայարանի կառավարիչ ունի էլի

մի այդպիսի շուն՝ Ժակ անունով, որը Տիմի ար-
ժանատի արկայեանք կարող է համարուել: Ե՛րբ
և ի՛նչ եղանակ ուզում է լինի, Ժակին միշտ
երկաթուղու կայարանում կարելի է տեսնել:
Նրա խնամքի տակ են գտնուում հարաւ—արեւ-
մուտեան երկաթուղու դժի ստորին կարգի պաշ-
տանանքի ըստ որբերն ու այրիները: Աւերջրս
Ժակը հակառակ իր ցանկութեան, սակայն ամ
էր երկարատե հանգիստ վայելելու: Հոկտեմբերին
նրան Բէրլէյ ուղարկեցին, որպէս զի այնտեղի
վարակում հիւանդների համար ժողովարարու-
թիւն անէ: Եւ երբ Լոնդոն վերադարձաւ, երեք
ամսուայ կարանանին ենթարկեցին, որ չլինի թէ
վարակէ մարդկանց:

Սակայն չորքասանի մուրացիանների թաղա-
ւոր պէտք է ճանաչել Աէօ անունով շանը,
որ «Աէն-Բենարգէն» ցեղին է պատկանում և
ընտիր ծագումն ունի: 1892 թուից սկսած այս
խնատուն կենդանին Նորի քաղաքի հիւանդանո-
ցի որբերն ու այրիների օգտին է ծառայում:
Աէօն իւր անխնայ աշխատութեամբ այս ժամանա-
կամիջոցում կարողացել է 50,000 մարկ (25,000
ռուբ.) ժողովել: Նա սովորաբար իր ժողոված
փողերը միենայն դանձարանն է տանում և երբեք
չի պատահել, որ սխալուի: Նրա ներկայացրած
փողերի համար առանձին հաշուեմատեան է պահ-
ւում: Այդ շան ժողոված փողերի հաշուն հի-
ւանդանոցում երկու ձրի մահճակալ է գրուած և
գեւ էլի կդրուի:

Լոնդոնի հիւսիսային արուարձաններից մէ-
կի հիւանդանոցում երեխաների համար մի ձրի
մահճակալ գնելու կարիք զգացուեցաւ, քայց
զրա համար 14,000 մարկ ծախս էր հարկաւոր:
Եւ ահա այդ փողը ձեռք բերելու պարտաւո-
րութիւնը դրին Հնուպիս անունով մի թաւա-
մազ շան վերայ: Այդպիսի նպատակների համար
նա արդէն շատ անգամ է խոշոր դումարներ
հաւարել: Եւ որովհետեւ կամաց կամաց նրա
գործունէութեան ասպարէզը շատ ընդարձակ-
ուեցաւ և մենակ չէր կարող ամէն տեղ հասնել,
զրա համար նրան օգնական տուին «Միկադօ»
անունով մի ուրիշ շան, որ մի մանկական պա-
րահանդիսի ժամանակ ժողովեց 60 մարկ:


Ու շաղթութեան արժանի է և «Շպոտ» անու-
նով շանը, որն երկու տարուայ մէջ զանազան
բարեկործանական երեկոյթների ու հանդէսների
ժամանակ հաւաքել է 25,166 տարբեր գնի փո-
ղեր, որ ստացել է իր մատուցած ծառայու-
թեան համար և հետգհետ գիպել է մի առանձին
տփի մէջ:

Եօրիկ այդպիսի գործով պարտաւոր շներից
մէկը, «Պենսիօն» Գուլըր, ժողովարարութեան
էր գնում պարի շոր հապած և ներկայացում

էր տալիս ու պարում սերպանտին՝ ասում
պարը: Այդպիսով նա կարողացաւ շատ կարճ
ժամանակում մի հիւանդանոցի համար 2000
մարկ հաւաքել: Անցեալ տարի վերոյիշեալ մու-
րացիան շների խմբին աւելացան էլի երկու շոր-
բատանի բարեկարներ: Փոխկոտորում—«Եօէ» ան-
ունով շանը, որը շնայելով իւր կործանա-
կործանէութեան, հայրենի քաղաքի հիւանդա-
նոցի օգտին հաւաքել է 1620 մարկ և Աուլուն:

Այսպէս ուրեմն այս հաւատարիմ ու խե-
ղճ կենդանիները իրենց ըստ որ փերը մարդու
ծառայութեան են նուիրում և դարմանելին այն
է, որ ամբողջ Անգղիայում միայն մի շուն կայ,
որն իր նմանների համար է աշխատում: Պատ-
է կոչում մի անձնուէր անասունը և իր ժողո-
ված ըստ որ փողերը «կենդանիների ապահովու-
թեան» նուիրում թաղաւորական ընկերութեան
դանձարանն է պանում:

Մ. Լ.



ՅԱՆՎԱՐԻ ԵՐԵՎԱՆ 1899 թ. ՄԱՐՏ 4 ԸՊՐԱ

ՄԻԽԻԹԱՐ ՍԱՆՆԵՅԻՍ

12601-1337

(ԿԵՐԹԱՆԵՑԻ)

ՄԻԽԻԹԱՐ Սաննեյիս Ժ. Գ. զարի լու-
սաւոր աստղերից չէ, բայց իւրովսանն աշխա-
տել է մի կիկղիցու պայծառութեան հա-
մար՝ զրական երկերով և վարժապետական գոր-
ծունէութեամբ: Որքան և աննշան լինին նո-
րա զրական երկերը, որքան և համեստ լինի
նորա վարդապետական և վարժապետական
գործունէութիւնը, հարկ ենք համարում մի
քանի խօսքով տեղեկութիւն տալ նորա ան-
ձի և գործունէութեան մասին, համոզուած
լինելով, որ ի զուր չեն նոյն իսկ ամենաշնչին
տեղեկութիւնները, որ մեր անցեալ պատմու-
թեան կամ մասնազրութեան հետ որ և է
տանջութիւն ունին: Իսկ Միխիթար Սաննե-
յիս իւր անցեալով, իւր գործունէութեամբ մի
օղակ է Մեծօփայ վանքի և ընդհանրապէս